ԴԵՐԱՍԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶԱՐԻՖԵԱՆ *)

(1879 Թ. ՄԱՐՏ 23 — 1937 Թ. ՅՈՒԼԻՍ 9)

Ես ծնուել եմ պատմական Շիրակի մայրաքաղաք Գիւմրիում, 1879 *թ. Մարտ* 23–*ին*։

Չորս տարեկան հասակից արդէն որբ էի։ Հայրս ու մայրս մեռան միեւնոյն տարին։

Հայրս յայտնի որմնադիր էր։ Ժամանակին անուանի եկեղեցի շինող վարպետ։ Ի միջի այլոց, նորոգել է Սանահինի, Ղփչաղի եւ շատ ուրիշ վանքեր ու եկեղեցիներ։ Թաղուած է Ղփչաղում։

Ծնողներիս մահուանից յետոյ իմ խնամակալութիւնը անցաւ աւագ եղբօրս, որ ինձանից 24 *տարով մեծ էր եւ շարունակում էր հօրս արհեստը։*

Ապրեցի ու մեծացայ այնպէս, ինչպէս այն ժամանակ ապրում ու մեծանում էին Ալեքսանդրապոլի արհեստաւոր դասի բոլոր երեխաները — անհոգ ու զւարթ կեանք փողոցներում, անվերջ խաղեր ու վազվզուք։ Ես հնարամիտ ու ճարպիկ տղայ էի եւ խաղերի մէջ առաջնորդում էի ընկերներիս։

Նախնական կրթութիւնս ստացայ Ս. Փրկչի ծխական չորսդասեան դպրոցում։ 1892 *թ. գնացի Էջմիածին եւ ընդունուեցի Գէորգեան Ճեմարանը, ուր սովորեցի մինչեւ* 1894 *թուականը։ Հիւանդացայ եւ չը կարողանալով ուսումս շարունակել՝ դուրս եկայ երկրորդ դասարանից։ Վերադարձայ տուն եւ երեք տարի աշխատեցի երկրորդ եղբօրս խանութում։*

Մենք հինգ եղբայր էինք եւ մէկ քոյր. բոլորն էլ զարմանալի

---

*) Այս կենսագրութիւնը գրի է առնուած 1936 թ. Սեպտեմբեր 26–ին, «Սանթոս» նաւի վրա, Բրազիլիայի եզերքներին։ Զարիֆեանը թելադրել է և ես գրել եմ։ Ապա, Սան Պաւլո քաղաքում, կազմել եմ վերջնական ձեւը, որ կարդացել եւ վաւերացրել է ինքը Զարիֆեանը։ Որով կարելի է ասել, թէ ինչ որ այստեղ ասուած է՝ ամբողջը իրեն Զարիֆեանինն է։ Ս. ՎՐԱՑԵԱՆ

A.R.A.R.@

Երկարակեաց։ Մեծ եղբայրս 73 տարեկան հասակում ամուսնացաւ։ Ես էլ որոշել եմ հարիւր տարի ապրել...

Մանուկ հասակից ես առանձին սէր ունէի դէպի թատերական խաղերը։ Խանութում աշխատած ժամանակս յաճախ գնում էի թատրոն։ Այն ժամանակները Աղեքսանդրապոլում ներկայացումները յաճախ էին լինում։ Կային տեղական սիրողներ, բայց դալիս էին եւ Թիֆլիսից՝ Արէլեանը, Ստեփանեանը եւ ուրիշներ։

Տեղական դերասաններից յիշեմ Զարշողլեանին, որ մի արտակարգ հսկայ տղամարդ էր. բեմ մտնելու ժամանակ կռանում էր, որ գլուխը դրան չկպչի։

Ես այնքան յափշտակուեցի թատրոնով, որ որոշեցի նուիրուել դերասանութեան։ Եւ մի օր, 1897-ին, թողի ծննդավայրս ու փախայ — գնացի Թիֆլիս։ Այնտեղ մի ընկեր ունէի, տեղաւորուեցի մօտը։ Ապրում էի նրա հետ եւ ամէն կերպ աշխատում էի մօտենալ թատրոնական շրջաններին։

Բախտը ինձ ժպտաց։ Մի օր ծանօթացայ դերասան Գէորգ Պարոն — Սարգսեանի հետ, որ նշանաւոր հարբեցող էր եւ ներկայացումներ էր տալիս Թիֆլիսում։ Գտայ նրա թոյլ տամարը — խմցրի եւ ընդունեցի խմբի մէջ։ Եւ առաջին անգամ, 1897 թ. նոյեմբ. 5-ին, երեւացի բեմի վրա։ Որով, ուրեմն, այս տարի լրանում է իմ բեմական գործունէութեան քառասնամեակը։

Յիշում եմ շատ լաւ. ներկայացնում էր «Զարդուչակ քայլը» թատերախաղը, Վրաց ազնուականների (նախկին Արծրունու) թատրոնում։ Ես խաղում էի գերմանացի ծառայի դերը եւ պէտք է խօսէի գերմաներէն։ Երբ Պարոն — Սարգսեանը առաջարկեց ինձ այդ դերը, ես չարեցի ու տատանուում էի ընդունել. չէի ըմբռնում, թէ ինչպէ՞ս կարող եմ, առանց գերմաներէն գիտենալու, խաղալ գերմաներէն։ «Ոչի՛նչ, կը սովորես, հանգստացրեց Պարոն — Սարգսեանը, անգիր արա — պրծաւ գնաց» ... ։

Այդպէս էլ արի։ Միւս դերակատարներն էին Գէորգ Տէր — Դաւթեանը, Արշակ Մամիկոնեանը, Գէորգ Պապուրեանը, Պարոն — Սարգսեանը, Օր. Խիթարեանը եւ Տիկ. Զարէլը։ Յուշարար էր Զարշարեանը։

Խաղը անցաւ շատ յաջող, բայց նոյն գիշեր, ներկայացումից յետոյ, Պարոն — Սարգսեանը խելագարուեց եւ այլեւս երբեք բեմ չելաւ։ Երեք օր, գիշեր ու ցորեկ, ես խնամեցի իմ դժբախտ ուսուցչին, որին եմ պարտական իմ առաջին քայլերս եւ որի յիշատակը միշտ սրբութեամբ պահում եմ սրտումս. նա՛ ինձ մարդ դարձրեց։

digitised by

Այսպիսով սկսեց իմ բեմական կեանքը։ Պէտք է ասել, որ առաջին ներկայացումը աւելի եւս հրահրեց թատրոնական կրակը իմ մէջ։ Ես զգացի, թէ իմ կոչումը բեմն է, որին նուիրուեցի պատանի սիրահարի թափով։ Ըստ երեւոյթին, մէջս որոշ կրակ կար, որովհետեւ առաջին անգամ բեմ դուրս գալս դրաւել էր շատերի ուշադրութիւնը։ Դէթ ինձ այդպէս էին ցոյց տալիս...

Երկրորդ ներկայացումն էլ տեղի ունեցաւ նոյն թատրոնում եւ դերակատարների միեւնոյն կազմով։ Խաղացինք «Օրեայ Զարիք» թատերգութիւնը։ Ի միջի այլոց, այս ներկայացման, իբրեւ սիրող դերասան մասնակցում էր եւ ներկայ Կաթուղիկոս Խորէն Առաջինը (Ալեքսանդր Մուրատբէկեան), որ այն ժամանակ ուսուցիչ էր Ներսիսեան դպրոցում։ Լոթի տղայ էր, ուտող – խմող, քէֆ անող եւ աղջիկների յետեւից վազող։ Նա բաւական յաջողութեամբ խաղում էր սիրահարի դեր, իսկ ես ինչ որ յայտնի բժիշկ – պրոֆէսորի դեր ունէի։

Այդ նոյն թատերական տարեշրջանում, տօնուեց Գէորգ Տէր – Դաւթեանի բեմական գործունէութեան 25ամեայ յոբելեանը։ Այդ առթիւ ներկայացուեց Գ. Սունդուկեանի «Օսկան Պետրովիչը էն կինքում» զաւեշտը, որի մէջ ես խաղում էի Միղդիսով մեռելի դերը։ Սունդուկեանը, որ ներկայ էր, առանձնապէս ուշադրութիւն դարձրեց իմ խաղին եւ եկաւ բոլորի ներկայութեամբ սեղմեց ձեռքս, շնորհաւորեց եւ ի լուր ամենքի ասաց. «Շուտով մինձացիր, օ՛րթիս, վուր Պեպօս խաղաս»... Կարող էք երեւակայել, թէ ինչքա՜ն ուրախացրին ու թեւ տուին ինձ մեծ թատերագրի այս քաջալերական խօսքերը։

Նոյն թատերական տարեայ վերջը Բաքուից Թիֆլիս վերադարձաւ դերասանական հեծ խումբը, որի մէջ էին այն ժամանակւայ մեր բոլոր յայտնի դերասանները — Սիրանոյշ, Վարդիթեր, Վարդուհի, Տիկին Մելիքեան, Մարի – Հրանոյշ, Պետրոսեան, Արէլեան, Արաքսեան, Յարութիւնեան, Ալիխանեան, Դաւիթ Թուրեան եւ ուրիշներ։ Նրանցից շատերը արդէն Բաքուից լսել էին իմ մասին, իբրեւ յուսատու սկսնակի, այդ պատճառով ինձ էլ ընդունեցին իմրի մէջ։ Եւ երեք տարի նրանց հետ խաղացի Բաքուում։ Իմ այդ ժամանակւայ խաղացած դերերից յիշում եմ՝ թագաւորի դերը «Մեդէա»–յում, Մաքս՝ «Զաւակ»–ում, երեք պրոֆէսորներից մէկի դերը «Դարբնոցապետ»–ում, թագաւորի եւ Ուրւականի դերը «Համլետ»–ում։ Կարծեմ, լաւ էի խաղում. գոնէ շատերը այդպէս էին ասում։ Ես ամբողջ հուժեամբս ապրում էի բեմով։

ARAR©

1900–ին Սիրանոյշն ու Պետրոսեանը իրար հետ կուեցին ինչ որ մի բանի համար։ Դրուելու էր «Կեանքի արժէք»–ը։ Թատրոնի բոլոր տոմսակներն արդէն ծախուած էին։ Բայց Պետրոսեանը կտրականապէս հրաժարուեց ու հեռացաւ խմբից։ Գլխաւոր դերը՝ Դանիէլ Դէմուրինը մնում էր բաց. ոչ ոք չէր համարձակւում ստանձնել։ Ներկայացումից մի օր առաջ, Սիրանոյշը կանչեց ինձ եւ ասեց, որ ընդունեմ։ Ես երկար հրաժարւում էի. ինչպէ՞ս կարող էի, Պետրոսեանից յետոյ, խաղալ այդ դերը, այն էլ մի օր ունենալով պատրաստուելու համար։ Սիրանոյշը յորդորում էր.

— Քեզի կըսեմ՝ կընաս։ Պէ՛տք է ընդունես...

Ի՞նչ էր մնում անել։ Հո չէի կարող մերժել Սիրանոյշին։ Ընդունեցի։

Պէտք է ասել, որ ինչպէս այժմ, այն ժամանակ էլ ես արտակարգ յիշողութիւն ունէի դերերը սովորելու։ Ամբողջ օր ու գիշեր սովորեցի Դանիէլ Դէմուրինի դերը, առաւօտեան մասնակցեցի փորձին, իսկ երեկոյեան խաղացի, փայլուն յաջողութեամբ։ Քննադատներից մէկը գրել էր, թէ Զարիֆեանը շատ լաւ խաղաց եւ ամէն բան լաւ էր, բայց հակառակ իր ճերմակ մազերին՝ աւելի Սիրանոյշի որդուն էր նմանում, քան ամուսնուն...

Այս մի քիչ զաւեշտական դէպքը, կարելի է ասել, վճռեց իմ դերասանական ապագան թէ՛ թատերախումբի եւ թէ՛ հասարակութեան աչքին։ Խումբը այցելեց մի շարք հայաբնակ քաղաքներ՝ Նոր–Նախիջեւան, Շուշի, եւ ես Սիրանոյշի հետ կատարում էի գլխաւոր դերերը։ Եւ այնուհետեւ զարձայ խմբի մնայուն անդամը՝ մասնակցելով ներկայացումներին, իբրեւ առաջնակարգ դերեր կատարող։ Խումբը պահւում էր Թիֆլիսի Հայոց Դրամատիկական Ընկերութեան կողմից, իսկ ամառը ընկերական պայմաններով ներկայացումներ էր տալիս գաւառական քաղաքներում։

Ես սովորաբար խաղում էի դրամատիկ–հերոսների, աւելի ճիշտը՝ սիրահարների դերեր։ 15 տարի Տիկ. Մայսուրեանի հետ խաղացել եմ սիրահարի դերեր, որոնցից մասնաւորապէս յիշեմ Էրակլի՝ «Դաւաճանութեան» մէջ, Եոհան՝ Հաուպտմանի «Մենակ մարդիկ» խաղում, Օսվալտ՝ «Ուրուականներ»–ում, եւայլն։ Խաղացել եմ 300–ից աւելի թատերգութիւնների մէջ։ *) Հարուստ խաղացանկ ունէի,

*) Գնում ենք այստեղ ցանկը այն դերերի, որ Զարիֆեանը խաղացել է իր քեմական կեանքի ընթացքում։ Այդ ցանկը Զարիֆեանը ինքը գրի առաւ յիշողու-

A.R.A.R.©



ԴԵՐԱՍԱՆ Յ. ԶԱՐԻՖԵԱՆ

(Վերջին բամբասությունը. 1936 թ. Օգոստոսին, Բուէնոս – Այրէսի Հայ կեդրոնի սրահում)

բարդ հոգեբանական խաղեր: Հայոց բեմի փայլուն շրջանն էր: Յաջողութեան անսահման պատեհութիւններ:

1902*ին ամուսնացայ: Կինս, Տիկ. Արաքս, դեռ օրիորդ ժամանակ,* 1900–*ից սկսած, խաղում էր ինձ հետ եւ այնուհետեւ էլ եղաւ իմ գործի ընկերը:*

1907 *թւին, Դրամատիկական Ընկերութեան ընդհանուր ժողովը որոշեց ուղարկել ինձ արտասահման կատարելագործւելու համար, բայց որոշումը կարելի չեղաւ իրագործել, հակառակ իմ բուռն ցանկութեան. խմբում իմ տեղը բռնող չկար: Ընկերութեան վարչութիւնը որոշման գործադրութիւնը յետաձգեց յաջորդ տարւայ: Բայց յաջորդ տարի էլ կրկնւեց նոյն պատմութիւնը: Եւ այսպէս՝ երեք տարի:*

քեամբ, իր կենսագրութիւնը պատմելիս, յայտնելով նաեւ, որ ցանկը շատ պակասաւոր է: Ահա՛ այդ ցանկը.

Դասական խաղեր՝ Համլէթ, Օթէլլօ, Ուրիէլ, Քին, Արծւիկ, Էրնանի, Ռոմէօ, Ռուի – Բլազ, Էդիպ թագաւոր, Կարլոս՝ «Աւազակներ»–ից, Պետրոնիոս՝ «Յո՞ երթաս»–ից, Կարլոս թագաւոր՝ «Դոն – Սէզար»–ից, Ֆէրդինանդ՝ «Խարդաւանանք եւ Սէր»–ից, Կարլօ Բիզոոր՝ «Հայրենիք»–ից, Մարիօ՝ «Տոսկա»–յից, Հասօն, Ֆիլոկտէտ՝ «Մէդէա»–յից, Էդգար՝ «Արքա Լիր»–ից, Բուդդա՝ «Իզէիլ»–ից, «Դաւանանութեան» բոլոր դերերը, Պետրուչիօ՝ «Անսանձի սանձահարում»–ից, Կոռադօ՝ «Ոճրագործի ընտանիք»–ից, Նապոլէոն՝ «Մադամ Սան Ժէն»–ից եւ այլն:

Ժամանակակից խաղեր՝ «Մենակ մարդիկ»՝ Եոհան, «Խորտակուած զանգակը»՝ Հէնրիխ, «Միքայէլ Կրամէր»՝ Արնոլդ, «Ուրւականներ»՝ Արնոլդ, «Հէդդա Գաբլէր»՝ Պրոֆ. Թոմաս, «Դոկտ. Շտոկման»՝ Շտոկման, «Կեանքի արժէքը»՝ Դանիէլ Դէմուրին, «Կեանքի ճանկերում»՝ Նարոպ – Պէր Բաքս, «Թոյլեր եւ ուժեղներ»՝ Գէորգի, «Գարնանային հեղեղ»՝ Սերգէյ, «Թայփուն»՝ Դր. Տոկէրամօ, «Տրիլբի»՝ Սվէնգալլի, «Կենդանի դիակ»՝ Ֆէոդոր, «Ժան – Ռուլ»՝ Ժան – Ռուլ, «Անմեղ մեղաւորներ»՝ Նեզնամով, «Ապուշ»՝ Ռոգոժին, «Պատիւ»՝ Ռոբէրտ, «Հայրենական տուն»՝ Պաստոր, «Յիմարը»՝ Իւստուս, «Անցորդ կին»՝ Ռէյմոնդ, «Վարքի բւանշան»՝ Ֆէլիքս, «Ամբողջ քաղաքը կը խօսի»՝ Զէստըր եւ այլն:

Հայ հեղինակներից՝ «Հին Աստուածներ»՝ Աբեղայ, վանահայր, «Կայսրը»՝ Օհան Գուրգէն, «Ընկած բերդի իշխանուհին»՝ Վասիլ, Պեպօ, «Չար Ոգի»՝ Գիժ Դանիէլ, «Պատւի համար»՝ Էլիզբարով, «Եւգինէ»՝ Միհրան, «Նամուս»՝ Ռուստամ, Սէյրան, «Արցունքի հովիտը»՝ Ասլան, «Ոսկէ Հէքեաթ»՝ Սրնգահարը, «Մարւող ճրագներ»՝ Սերոբ, «Բաղդասար Աղբար»՝ Բաղդիկ, Աբիսողոմ Աղա, «Մեծն Վարդան»՝ Վարդան, «Խենթը»՝ Վարդան, Դաւիթ Բէկ, «Ջալալէդդին»՝ Սահրատ, «Ժայռ»՝ Ալեքսանդր, «Մելիքի Աղջիկը»՝ Սուլէյման, «Խամսայի Մելիքներ»՝ Աստղագէտը, «Վէրք Հայաստանի»՝ Աղասի եւ այլն:

Ս. Վ.

A.R.A.R.@

Զորբորդ տարին ես հրաժարուեցի Դրամատիկական Ընկերութեան խմբից, որպէսզի սեփական միջոցներով դնամ կատարելագործուելու:

1907 թ. ամառը ես ինքս կազմեցի դերասանական մի խումբ, երիտասարդ ուժերից եւ դուրս եկայ գաւառական քաղաքները: Խմբի մէջ մտնում էին Ստեփանեանը, Բերոյեանը, Գարագաշը, Մ. Ալեքսանեանը, Մայսուրեանը, Օր. Ադամեանը, Տիկ. Արաքս Զարիֆեանը, Օլգա Գուլազեանը, Մ. Մանուէլեանը եւ ուրիշներ: Ներկայացումներ տուինք Երեւանում, Ալեքսանդրապոլում, Հիւսիսային Կովկասում: Ամէն տեղ էլ յաջողութիւն դատնք: Եւ, որ զարմանալի էր, նիւթական տեսակէտից էլ արդիւնքը գոհացուցիչ եղաւ:

Խումբը կազմուած էր բոլորովին նոր սկզբունքով. առաջ վարձատրութիւնը ըստ արժանիքի էր. սովորաբար, նշանաւոր դերասանները ստանում էին առիւծի բաժինը, իսկ երիտասարդներին բան չէր մնում. երբեմն նոյն իսկ ճանապարհածախսն էլ հնար չէր լինում ապահովել: Ես որոշեցի՝ ներկայացման հասոյթից նախ բոլորին հաւասարապէս տալ 25-ական ռուբլի, իսկ մնացածը բաժանել ըստ արժանիքի, որով ապահովւում էր իւրաքանչիւր դերասանի նւազագոյն ապրուստը: Այս սկզբունքի գործադրութիւնը անցաւ շատ յաջող եւ այնուհետեւ դարձաւ սովորական: Այդ պատճառով ընկերներս կատակով ասում էին, թէ «սոցիալիստական կազմակերպութիւն» եմ մտցրել...

1908-ին նոյն խմբով այցելեցի Ալեքսանդրապոլ, Երեւան եւ այս տեղից՝ Թաւրիզ, ուր արտակարգ յաջողութիւն ունեցանք:

Բայց աւելի մեծ յաջողութիւն սպասում էր մեզ յաջորդ տարի, 1909-ին, երբ Տիկ- Մայսուրեանի հետ միասին կազմեցինք մի մեծ խումբ եւ անցանք Պոլիս: Ազատութեան օրեր էին, անօրինակ ոգեւորութիւն էր տիրում բոլոր շրջաններում: Մեր խմբի երեւալը անկարագրելի խանդավառութիւն առաջ բերեց:

Ներկայացումների շարքը բաց արինք «Ժան Ռուլ»-ով, ապա խաղացինք «Ուրիէլ Ակոստա»-ն, վերջը՝ Շերվանզադէի «Զար Ոգի»-ն, «Անյայտ Կին»-ը, «Դաւաճանութիւն»-ը, եւայլն: Ամբողջ ամառ ներկայացումներ տուինք Պոլսում, եւ թատերասրահը միշտ լիքն էր: Պոլսեցիք չտեսնուած ջերմ ընդունելութիւն ցոյց տուին մեզ:

Աշնանը խումբը վերադարձաւ Թիֆլիս, իսկ ես կնոջս հետ մնացի Պոլսում: Արդէն հրաժարուած էի Դրամատիկական Ընկերութիւնից: 1910 թ. ամբողջ տարի, կնոջս եւ սիրողների հետ, ներկայացումներ տուի Պոլսում: Այդ ներկայացումներին մասնակցում էին եւ Մնակեանը, նրա հարսը՝ Աղնիւը, Օր. Պէնէմէճեանը (այժմ Տիկ. Է-

լիզ Կովան), Աշոտ Մատաթեանը, Ենովք Շահէնը, Զոսպանեանը, Շահէն Յովհաննիսեանը եւ ուրիշներ:

1911 թ.-ին վերադարձայ Թիֆլիս եւ 12 հոգինոց մի խումբ կազմելով անցայ Վան՝ նախ Թիֆլիսում, Ալեքսանդրապոլում ու Երեւանում ներկայացումներ տալուց յետոյ:

Ճանապարհին, ընկանք Դրօի ձեռքը: Նա այն ժամանակ մեծ վաճառական էր Բայազէդում եւ յայտնի էր Սուրէն էֆէնդի անունով: Դժուար չէ երեւակայել, թէ Սուրէն էֆէնդին ինչ փառաւոր ընդունելութիւն արաւ մեզ, ինչ քէֆեր սարքեց: Եւ ստիպեց մի ներկայացում կազմակերպել հասարակութեան համար: Յարմար չէնք չը կար: Դրօի պահեստում, շաքարի եւ նաւթի արկղների վրա մի բեմ սարքեցինք եւ ներկայացում տւինք: Առաջին դերասանական խումբն էր, որ տեսնում էին բայազէդցիք: Անհերեւակայելի բազմութիւն էր հաւաքւել՝ հայ թէ թիւրք, որ անսահման ողեւորութեամբ ու բուռն ծափահարութիւններով էր հետեւում ներկայացման: Մենք էլ խաղում էինք բարձր տրամադրութեան մէջ: Անկեղծօրէն պէտք է ասեմ, իմ դերասանական կեանքի ամենէն լուսաւոր օրերից է Բայազէդի ներկայացման օրը, որ դլուխ եկաւ միայն Դրօի զարմանալի նախաձեռնող ոգու շնորհիւ: Տնաշէնը մեզ ուղղակի վառեց իր խանդավառութեամբ: Եթէ մի օր գրւելու լինի հայոց թատրոնի ամբողջական պատմութիւնը, Դրօի անունն էլ պէտք է յիշել «ռահվիրաների» շարքում, իրրեւ Բայազէդի հայ թատրոնի հիմնադիրը...

Վանում էլ՝ նոյն ողեւորութիւնն ու եռուզեռը, մանաւանդ, երիտասարդութեան մէջ: Հոյակապ ընդունելութիւն ցոյց տւին եւ անվերջ հիւրասիրութիւններով մեզ ձեռքից ձեռք էին խլում: Ներկայացումները տալիս էինք Երամեան դպրոցի սրահում, որը միշտ լեփ-լեցուն էր, ասեղ ձգելու տեղ չէր լինում: Խաղացինք «Միրա Էֆրոս»-ը, «Անյայտ կին»ը, «Զար Ոգի»ն, «Ժան Ռուլ»ը, «Թոյլերն ու ուժեղները», «Անմեղ մեղաւորներ»ը, «Արցունքի հովիտ»ը, «Բաղդասար Ազբար»ը եւ կուսակալ Ճէվատէթ բէյի խնդրանօք, թիւրքերի համար, «Ադամ, Եւա» թիւրքերէն: Ճէվատէթ բէյը ջերմ ընդունելութիւն ցոյց տւեց խմբին, մի փառաւոր խնջոյք սարքեց եւ 500 ոսկի էլ նէր տւեց — ներկայացման բոլոր տոմսակների գինը: Այս 500 ոսկիով էր, որ հետագային գնացի Մոսկւա ուսանելու՝ Դրամատիկական Ընկերութեան թոշակի փոխարէն:

Վանում մնացինք երեք եւ կէս ամիս: Անմոռանալի են այդ օրերը: Վանեցոց ցոյց տւած համակրանքն ու յարգանքը արտակարգ էր: Ես երբեք չեմ մոռանայ այն մեծ խնջոյքը, որ տւեց մեր մեկնելուց

առաջ։ Խանդավառ ճառերին վերջ չկար։ Հարիւրաւոր ստորագրութիւններով ծածկւած մի ուղերձ տրւեց մեզ։ Եւ մի արծաթէ հոյակապ պսակ, պատրաստւած վանեցի ոսկերիչների նուրբ արհեստով եւ խմբի բոլոր անդամների անունները վրան արձանագրւած։

Զմռռանամ յիշել եւ Աղթամարի պարագան։ Մեր նախավերջին ներկայացման օրը Վան հասաւ Դրօն։ Դէ՛, հասկանալի է, ո՛ւր Դրօն, այնտեղ եւ քէֆ ու զալմաղալ։ Նրա առաջարկով էր՝ որ մի մեծ խմբով ելանք գնացինք Աղթամար։ Դրօից զատ, կային Իշխանը, Գարմէնը, Ռաֆայէլը եւ շատ ուրիշներ։ Գնացինք Դանիէլ վարդապետին հիւր։ Եւ մէկ շաբաթ մնացինք Դանիէլ հայր – սուրբի հիւրասէր ու ջերմ հնչի տակ, բնականաբար, քէֆերով եւ ուրախութիւններով։

Մի օր էլ, տաք քէֆից յետոյ, կատարներս լաւ կարմրած՝ թռանք ձիերը եւ արշաւեցինք լեռների ուղղութեամբ։ Ես աննկատելի կերպով բաժանւեցի խմբից եւ առաջ անցայ. յետեւիցս զալիս էր դերասան Գարագաշը։ Բաւական հեռացել էինք, երբ, յանկարծ, մեր ճամբան կտրեցին 8 – 10 ձիաւոր քրդեր եւ հրացանները մեր կողմը ուղղելով՝ պահանջեցին, որ կանգնենք։ Ես սարսափեցի ու սմքեցի թամբի վրա։ Մտածում էի, թէ չան սատակ պիտի լինենք ու զոհ պիտի դառնանք վայրենի քրդերին։ Գինովութիւնս մէկէն անցաւ։

Քրդերի առաջնորդը առաջ եկաւ եւ հայերէն հարցրեց, թէ՝ «Ո՞վ է ձեզանից դերասանապետ Զարիֆեանը»։ Անունս որ լսեցի, է՛լ աւելի վախեցայ ու մնացի լուռ։ Քիւրդը նորից հարցրեց, այս անդամ աւելի խրոխտ ու, կարծես, սպառնական ձայնով։ Ես կմկմալով պատասխանեցի. «Ես եմ»։ Քիւրդը է՛լ աւելի բարձր ձայնով ասաց. «Այդ ի՞նչ բարոյական օրէնքով դու երեք ամիս է քաղաքը ներկայացումներ կուտաս, իսկ գիւղերը անտես արած ես»...

Ես հասկացայ, որ թիւրիմացութեան մէջ եմ, որ այս «քիւրդերը» քիւրդ չեն, այլ մեզ պէս հայ քրիստոնեայ մարդիկ, եւ սիրտ առնելով՝ սկսեցի բացատրել, թէ մեղքը իմը չէ. ի՞նչ անեմ, որ գիւղերում յարմարութիւններ չկան։ Ճիշտ այդ վայրկեանին վրա հասաւ Դանիէլ վարդապետը եւ բացագանչեց՝ «Տղա՛, Գալուստ, այդ ի՞նչ բաներ կընես»։ Պարզւեց, որ խօսող «քիւրդը» խմբապետ Գալուստն է, որ գիւղերից մի – մի ներկայացուցիչ առած եկել էր, որպէսզի մեզ պարտադրէ գիւղացիների համար էլ ներկայացումներ կազմակերպել։

Դանիէլ վարդապետի առաջարկով որոշեցինք գիւղացիների համար էլ ներկայացում տալ։ Դանիէլ վարդապետը խոստացաւ յարմարութիւններ ստեղծել եւ կարգադրեց Գալուստին, որ գիւղացիներին

հաւաքէ։ Գալուստը իր «քրդերով» գնաց Դանիէլ վարդապետի հրամանը կատարելու, իսկ մենք վերադարձանք Աղթամար, ուր Դանիէլ վարդապետը խսկոյն անցաւ գործի եւ կապերտներից ու տախտակներից մի բեմ շինել տւեց դպրոցում։

Մինչ այստեղ բեմն էր պատրաստւում, միւս կողմից սկսեց հաւաքւել «ունկնդիր հասարակութիւնը». ոտքով ու սայլով, զուռնայով եւ երգ ու պարով ամէն կողմից գալիս էին գիւղացիք իրենց ընտանիքներով՝ հետները բերելով ոչխար, հաւ եւ ամէն տեսակ ուտելիքներ ու խմիչքներ։ Ինձ համար էլ նուէրներ էին բերել՝ ոչխար, կարագ – պանիր, եւայլն։

Շուտով ամէն տեղ բռնեցին սայլերը։ Սկսւեց կերուխումը, երգն ու պարը, ճիշտ ուխտի օրերի նման։ Երեք օր շարունակ, ցերեկ ու երեկոյ ներկայացումներ էինք տալիս, եւ գիւղացիք հերթով ունկնդրում էին, իսկ դուրսը մնացողները քէֆ էին անում։ Ներկայացրինք Ահարոնեանի «Արցունքի հովիտը» եւ Աբելեանի «Մարւող ճրագները»։ Աննկարագրելի խանդավառութիւն, տօնական ցնծութիւն էր տիրում։ Այդ օրերը անմոռանալի են ինձ համար. իմ ամբողջ բեմական կեանքում ես այդպիսի անկեղծ ուրախութիւն չեմ տեսել։

Վանից վերադարձանք, եւ 1911 թ. աշնանը ես գնացի Մոսկւա, ամբողջ մի տարի պարապեցի Գեղարւեստական Թատրոնի Ստուդիայում՝ Նեմիրովիչ – Դանչենկոյի եւ Ստանիսլաւսկու ղեկավարութեան տակ։ Այդ տարի «Համլէտ» էր բեմադրւում եւ դրսից ոչ մի դերասան չէր ընդունւում։ Նեմիրովիչ – Դանչենկօն մի ամբողջ ժամ խօսեց հետս, հարցաքննեց եւ իմացաւ ամբողջ կեանքս եւ, իբրեւ բացառութիւն, ընդունեց ինձ։ Պէտք է ասել, որ ես շատ օգտւեցի Գեղարւեստական Թատրոնից, որոշ ուղղութիւն ստացայ, զարգացրի իմ դերասանի միտքը, համակւեցի այդ հռչակաւոր թատրոնի գաղափարներով ու խաղի ձեւերով, որոնք այնքա՜ն մօտ էին իմ ըմբռնումներին եւ հարազատ՝ հոգուս։

Այդ նոյն տարին Մոսկւա եկաւ Տիկին Սիրանոյշը՝ հետը բերելով Աբէլեանին, Յարութիւնեանին, Ալիխանեանին, Շահխաթունուն, Բերոյեանին, Տիկ. Մայսուրեանին, Օր. Ադամեանին եւ ուրիշներին։ Եկել էր ռուս հասարակութեան եւ Մոսկւայի հայ հասարակութեան ցոյց տալու հայ թատրոնը։ Նա խաղաց «Դաւաճանութիւն»ը, «Հայրենական Տուն»ը, «Նամուս»ը։ Այդ ներկայացումներին ներկայ էին եւ ռուս ամենայայտնի դերասաններն ու քննադատները, որոնք մեծ գովեստով խօսեցին հայ խմբի խաղի մասին. չէին սպասում, որ հայ դերասանները կարող էին այդքան կատարելագործւած խաղ տալ։

ARAR@

Մանաւանդ, մեծ յաջողութիւն գտաւ «Դաւաճանութիւն»ը, որին ռուս հասարակութիւնը լաւ ծանօթ էր եւ կարող էր համեմատել ռուսական լաւագոյն խաղերի հետ: Հեղինակը՝ Սումբատովը հիացած էր Սիրանոյշից, որը, նրա ասելով, «լաւագոյն Զէյնաբն էր իր բոլոր տեսածների մէջ»: Նա մի զեղեցիկ գափնէ պսակ նուիրեց Սիրանոյշին: Բնորոշ է, որ Աբէլեանը ո՛չ մի յաջողութիւն չունեցաւ: Մոսկուայից խումբը գնաց Պետերբուրգ եւ այնտեղ էլ ներկայացումներ տուեց: Սիրանոյշի պահանջով եւ թատրոնի առանձին արտօնութեամբ ես էլ մասնակցեցի Սիրանոյշի ներկայացումներին:

1912-ի գարնանը ես վերադարձայ Կովկաս: Արդէն առաջուց հրաւիրուած էի Բաքու զերասանուհի Հրաչեայի կողմից: Այստեղ ներկայացում տալուց յետոյ, անցայ Թիֆլիս, ուր նոյնպէս մի քանի ներկայացումներ տուի: Իսկ 1912 – 13 թ. ձմեռուայ համար հրաւէր ստացայ խաղալու Բաքուի Կուլտուրական Ընկերութեան խմբում, շատ նպաստաւոր պայմաններով: Այստեղ, եօթը տարուայ ուսումնասիրութիւնից յետոյ, առաջին անգամ խաղացի Համլէտը: Այդտեղ արդէն երեւաց Գեղարուեստական Թատրոնի ազդեցութեան արդիւնքը: Այդ բեմադրութիւնը, խաղի բոլոր մանրամասնութիւններով, արտակարգ երեւոյթ էր. այն ժամանակւայ բոլոր թերթերը նշեցին, թէ Համլէտի բեմադրութիւնը նոր եւ զեղեցիկ երեւոյթ է թատրոնի կեանքում:

Նոյն տարին առաջին անգամ բեմադրուեց եւ Շանթի «Հին Աստուածներ»-ը: Այս խաղն էլ արտակարգ յաջողութիւն ունեցաւ եւ նոյնպէս արտասովոր երեւոյթ էր մեր թատերական կեանքում: Մի օր առաջ էլ բեմադրուել էր Աբէլեանի խմբի կողմից, Թիֆլիսում:

Բաքու մնացի մինչեւ 1916 թ.: Ամառները խմբով ներկայացումներ էինք տալիս գաւառական քաղաքներում: 1914-ի ամառը, Սեւումեանի հետ միասին, մի մեծ խումբ կազմեցինք եւ գնացինք Պոլիս: Այս երկրորդ այցելութիւնն էլ անցաւ մեծ յաջողութեամբ: Ամէն օր ներկայացումներ էինք տալիս: Խաղացինք «Հին Աստուածներ»-ը, «Օթէլլո»ն, «Համլէտ»ը, «Թաղաւոր»ը, «Ուրիէլ Ակոստա»ն, «Ժան Ռուլ»ը եւ այլն: Պատերազմից առաջ վերադարձանք Կովկաս:

Այն ժամանակ, երբ մեր խումբը, Կուլտուրական Ընկերութեան հրաւէրով, խաղում էր Բաքուում, Թիֆլիսում էլ գործում էր Հայ Դրամատիկական Ընկերութեան խումբը — Աբէլեան, Արմէնեան, Սեւումեան, Մայսուրեան, Ալիխանեան, Վարդուհի եւ ուրիշներ: Երկու խմբերն էլ հասարակական թանգագին աշխատանք էին կատարում եւ Կովկասի երկու մեծ քաղաքների հայ կեանքում բարձր ոգե-

ւորութիւն ստեղծում։ Մեր թատրոնի լաւագոյն տարիներից էին դրանք, երբ թէ՛ նիւթական եւ թէ բարոյական պայմանները բարեյաջող էին եւ հասարակութիւնը արտակարգ հետաքրքրութիւն ու սէր էր ցոյց տալիս դէպի մայրենի բեմը։

Ամէն դարնան այս խմբերը միմեանց փոխարինում էին. մեր խումբը գնում էր Թիֆլիս, իսկ այնտեղինը գալիս էր Բաքու։ Բացի այդ, անհատ դերասանները գնում էին առանձին ներկայացումների, ես յաճախ գնում էի Թիֆլիս, Արէլեանը գալիս էր Բաքու։ Այսպէս, առաջ էինք մղում հայ թատերական գործը, որ արդէն հասել էր բարձրը կատարելութեան։

Թիֆլիսի եւ Բաքուի խանդավառութիւնը, ինչպէս ասացի, ամէն ամառ փոխադրւում էր եւ դաւառները։ 1916–ին ես մի մեծ խմբով անցայ Աղեքսանդրապոլ, ապա՝ Երեւան եւ այլեւս մինչեւ 1920–ի աշունը Հայաստանից չհեռացայ։ Թէ՛ պատերազմի, թէ՛ յեղափոխութեան եւ թէ անկախութեան շրջանում, այդ ընդհանուր թոհուբոհի եւ ոգեւորութեան մէջ, մեր խումբը հերթով ներկայացումներ տուեց Երեւան, Աղեքսանդրապոլ, Կարս եւ այլ վայրերում։ Բանակը զէնքով պաշտպանում էր մեր հայրենիքը, քաղաքական գործիչները պետական շէնքն էին կառուցանում, մենք՝ դերասաններս էլ հայ մշակոյթի տաճարն էինք ծաղկեցնում մեր նորագտ հայրենիքում։ Ինչպի՜սի՜ անսահման ոգեւորութիւն եւ անձնազոհութիւն ամենքի կողմից, ի՜նչ անմոռաց օրեր։ Ես երջանիկ եմ, որ մասնակցել եմ անկախ Հայաստանի ստեղծումին, երջանիկ եմ անսահման, որ ես էլ մի քար եմ դրել մեր սիրելի հայրենիքի պետական շէնքի հիմքում։ Այդ հիմքը, հաւատա՛ ինձ, ամուր է, որքան էլ շատերին այսօր խախուտ երեւայ։ Այս օրերը կանցնին։ Ցիշո՞ւմ ես սպանելէն երգը՝ Passara! Կանցնի՛ ...

Ցիշում եմ 1917 թուի ձմեռը։ Խաղում էինք Կարսում։ Մի օր էլ եկաւ հանդիսանալու Սեպուհի կամաւորական դունդը։ Սեպուհը կըպաւ օձիքիցս, թէ տղաների համար ներկայացում պիտի տաս։ «Ինչո՞ւ չէ, տանք», ասացի եւ խոստացայ խաղալ «Խենթ»–ը։ Կամաւորների համար յարմար նիւթ էր։ Բեմի համար զինուորներ էին պէտք։ Խնդրեցի, եւ Սեպուհը ուղարկեց մի հարիւրեակ։

Ներկայացման օրը սրահը լեփ – լեցուն էր։ Շնչել կարելի չէր։ Ուր կարելի էր ոտք դնել, խռնուած էին կամաւորները։ Բեմի վրայ կազմ ու պատրաստ կեցած էր Սեպուհի ուղարկած հարիւրեակը հարիւրապետի գլխաւորութեամբ։ Ես խաղում էի Վարդանի դերը եւ գտնւում էի զինուորների մէջ։ Հարիւրապետին սովորեցրի, թէ ինչ

պէտք է անել, ըստ խաղի ընթացքի: Տեսարանը ներկայացնում էր Բայազէդ բերդը: Վիճակը յուսահատական էր: Ռուս զնդապետը — դերասան Գարագաշ — գալիս բացատրում է զինուորներին, թէ հաց ու ջուրը վերջացել է, բերդի վիճակը տագնապալից է: Ո՞վ կը հասցնէ այս նամակը Զօր. Տէր – Ղուկասեանին: Այս հարցը երեք անգամ պիտի տուէր եւ երրորդ անգամը ես զինուորների միջից պիտի կանչէի՝ «Ես», ու կամաւորներն էլ «կեցցէ՛» պիտի գոռային: Բայց իմ բացատրութիւնից հարիւրապետը այնքան յուզուեց ու ոգեւորուեց, որ Գարագաշի առաջին իսկ հարցի վրա՝ առաջ անցաւ եւ գոռալով պատասխանեց. «Ե՛ս կը տանեմ»... Բեմի վրայի եւ սրահի կամաւորները «կեցցէ՛»-ներով ու ծափահարութիւններով թնդացրին սրահը: «Դէ՛, չան որդի, ասացի ես, որ դո՛ւ կը տանես, յաջորդ մասն էլ դու խաղա՛»... Բայց մեր ճարպիկ Գարագաշը իսկոյն փրկեց դրութիւնը. «Ո՛չ, զաւա՛կս, պատասխանեց նա հարիւրապետին, դու այստե՛ղ հարկաւոր ես. ուրիշ մէկը չկա՞յ, որ նամակը տանէ»: Ես իսկոյն առաջ անցայ եւ գոչեցի.«Ե՛ս»: Բայց այս անգամ ո՛չ բեմի վրայի զինուորները ծափահարեցին, ոչ էլ «ունկնդիր հասարակութիւնը»... Խաղը, ի հարկէ, անցաւ շատ յաջող: Ներկայացումից յետոյ էլ, զորս դու պատուիրեցեր, մի լաւ քէֆ ունեցանք...

Անկախութեան շրջանում էլ, փոխ առ փոխ խաղում էինք թէ՛ Ալեքսանդրապոլում, թէ՛ Երեւանում: Երեւանում մեր տրամադրութեան տակ էին Զանփոլատեանի թատրոնը եւ Պարլամենտի սրահը: Խումբը բաղկացած էր առաջնակարգ ուժերից — Մայսուրեան, Աբէլեան, Աւետեան, Յարութիւնեան, Մանուէլեան, Բերոյեան, Գարագաշ, Օլգա Գուլազեան, Արաքս Զարիֆեան, Յասմիկ, Օր. Աբրահամեան, Օր. Սիւզան, Մ. Ալիխանեան եւ ուրիշներ: Մեծ ու փառաւոր խումբ էր: Վճարումները շատ լաւ էին: Ոգեւորութիւնը՝ անսահման թէ՛ դերասանների եւ թէ հասարկութեան մէջ: Ամէն օր ներկայացումներ էինք տալիս, էլի միշտ սրահը լիքն էր լինում եւ թատրոնի դուռը բացելուց դեռ շատ առաջ արդէն կիչէի վրա յայտարարութիւն էր փակցուում, թէ՝ «բոլոր տոմսակները ծախուած են»: Մարդիկ ժամերով հերթի էին կանգնում տոմսակ ձեռք բերելու համար: Ի՜նչ օրեր էին ...

Հա՛, յիշեմ եւ 1920 թ. անկախութեան տօնը Երեւանում, որի հանդէսների, այսպէս ասենք, թատերական մասը ինձ էր յանձնուած: Ակադ. Թամանեանը ծրագրեց ու կազմակերպեց քաղաքի արտաքին զարդարանքը, իսկ ես ծրագրեցի ու վարեցի հանդէսների մասը — շքերթները փողոցներում, հրապարակային հանդէսները, երեկոյթ-

ներն ու ներկայացումները։ Հայաստանի մայրաքաղաքը վերածուեց մի հսկայական բեմի. դերակատարներն էին Պետութեան վարիչները, բանակը, արհեստակցական միութիւնները, աշակերտութիւնը, արիները, գիւղերից եկած բազմութիւնները, մի խօսքով — ողջ հայոց ժողովուրդը։ Ով ա՛յն օրերին Երեւանում էր, կը յիշէ, թէ ի՜նչ վառաւոր հանդէսներ տեղի ունեցան Հանրապետութեան տարեդարձի օրը։ Եւ ես հպարտ եմ, որ այդ օրւայ հանդէսների կազմակերպիչների մէջ կայ եւ իմ անունը։ Ես էլ, իբրեւ հայ մշակոյթի համեստ մշակ, անմասն չեղայ մեր Պետութեան ստեղծման գործին։

Ափսոս որ այդ հէքեաթային օրերը երկար չտեւեցին։ Եկաւ չար բաղուկը եւ քանդեց ամէն ինչ։ Ինչ որ չինւած էր՝ աւերակ դարձաւ։ Եւ մենք նորից դադարկիւն՝ ընկանք երկրէ երկիր տարագրի սեւ ճակատագրին մատնւած։ 1920 թ. աշնանը ես հեռացայ Թիֆլիս, այնտեղից՝ Պոլիս, ուր մնացի երեք ամիս։ Ապա, ամէն տեղ ներկայացումներ տալով, անցայ Ռումանիա, վերջը՝ Հիւս. Ամերիկա, որ դարձաւ իմ երկրորդ հայրենիքը։ Այստեղ տարիներ շարունակ, զանազան քաղաքներում ներկայացումներ տուի սիրողների հետ։ 1923-ին, Նիւ-Եորքում, մեծ փայլով տօնուեց իմ բեմական գործունէութեան 25ամեայ յոբելեանը, առաջնորդ Տիրայր Արքեպ.-ի պատւաւոր նախագահութեամբ։ Նոյն հանդէսները տեղի ունեցան եւ ուրիշ քաղաքներում։ Ուրախ եմ ասելու, որ իմ ներկայութիւնը Ամերիկայում անպտուղ չանցաւ. ստեղծուեց թատերական կեանք եւ առաջ եկան թատերական ուժեր։

1927 – 28 թուականներին ճանապարհորդութիւն կատարեցի Եւրոպայում, Եգիպտոսում եւ ուրիշ վայրերում՝ ամէն տեղ կազմակերպելով ներկայացումներ։

Զորս տարի էլ եղայ Հար. Ամերիկայում։

Հայաստան չգնացի, եւ այդ ինձ մեծ ցաւ է պատճառում։ Զեմ ուզում, որ ոսկորներս օտար հողի մէջ թաղւեն։ Անպատճառ պիտի տեսնեմ մեր սքանչելի Մասիսը ու այնպէս մեռնեմ։ Բայց քանի այս սրիկաները այնտեղ են, չեմ երթայ։

Փորձեցին խաբել ու տանել։ Նոյն իսկ աղգականներիս մէջ գտան։ Դերասան ընկերներս հաւաքական նամակ էին գրել, որ գնամ։ Խոստանում էին լաւ տեղ տալ Պետական թատրոնում — չգնացի։ Արէլեանն էլ երբ մեկնեց, ասաց, որ եթէ լաւ լինի, կը գրէ, որ ես էլ երթամ։ Գնաց ու ոչինչ չգրեց։ Հասկացայ, որ դատարկ խօսքեր են. ազատ կեանքի եւ ստեղծագործութեան վարժւած մարդկանց տեղ չը կայ այնտեղ։ Արդէն Արէլեանն էլ դժբախտ եղաւ։ Գերազասում եմ

անօթի մնալ ազատութեան մէջ, քան թէ կուշտ ապրել, թէկուզ, ոսկէ վանդակում։ Միայն երբեմն հոգիս նեղւում է, սիրտս կրծում է մի անհանգիստ որդ. տարիները անցնում են, ծերանում ենք, ժանգոտում ենք տարագրութեան մէջ, եւ մեր ուժերը, մեր տաղանդը ի զուր կորչում է...

Ամերիկայում մի քանի լաւ պատեհութիւններ ներկայացան, որ նիւթապէս կարող էի յաջողել — հայ բեմի սէրը թոյլ չտուեց։ Քալիֆորնիայում հրաւէր ստացայ մի մեծ հիմնարկութեան մէջ բեմական արուեստ ուսուցանելու, լա՛ւ վարձատրութեամբ ու դիրքով, չընդունեցի — որովհետեւ Նիւ – Եորքում հայերէն ներկայացումներ պիտի տայի։ Մի ուրիշ անգամ էլ սինէմայի շատ շահաւէտ գործ պատահեց — էլի հայ բեմը արգելք եղաւ։ Եւ այսպէս դէրվիշ էլ մընացինք...

Ես նման եմ այն թռչունին, որ ապրում է երգի համար։ Բեմական կեանքում էլ այսպէս եմ. սիրում եմ խորը հոգեբանական խաղերը, ուր կան նուրբ ապրումներ, հոգեւոր ելեւէջների բազմազան արտայայտութիւններ։ Իմ սրտին մօտ են Իբսէնը, Հաուպտմանը, Զուդերմանը։ Դերեր ընտրելիս եւ ուսումնասիրելիս ես ուշադրութեամբ զննում, վերլուծում եմ մարդկային հոգին, փնտռում եմ նրա առանձնայատկութիւնները եւ աշխատում եմ ցոյց տալ հարազատօրէն։ Ես սիրում եմ հասկանալ, սովորել, իւրացնել եւ արտայայտել չափուած ու ճեւուած, ամէն չեշտ, ամէն դիծ իր տեղը դրած։ Իմ ամբողջ կեանքում ես սովորել եմ, որոնել ու ձգտել եմ հասնել կատարելութեան, — ու երբեք էլ չեմ հասել։ Եւ արդէն իսկական արուեստը այդ է. միշտ ձգտել եւ երբեք չհասնել...